



ԳԵՐԵՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ԹՈՒՂԹ ՋԵՐՔՄԱՆ

ՊԱՏԱՍԽԱՆ «ՀՈՎՎԱԿԱՆ ԹՈՒՂԹ»-Ի

ՋՈՐ ԳՐԵՑ ՍՐԲՈ ՀՈՌՄԵԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՎՈՒ ԵՐԵՑ ԿԱՐԴԻՆԱԼ

ԳՐԻԳՈՐ ՊԵՏՐՈՍ ԺԵ. ԱՂԱՋԱՆՅԱՆ, ՊԱՏՐԻԱՐԺ ՀԱՅ ՀՈՌՄԵԱԿԱՆԱՑ՝

«Որ յամենայն ժամ ուսանին, և երբեք
ի գիտութիւն ճշմարտութեան ոչ հասանեն»:
(Բ. ՏԻՄՈԹ. Գ. 7)

Սիրեցյալ՝ Նղբայր ի Քրիստոս.

Ձեր Հովվական Թուղթը ուղղված եկեղեցականներուն և հավատացյալ ժողովուրդին՝ Երկրորդ հարյուրամյակին առթիվ երջանիկ մահվան Մխիթար Սեբաստացիի և Աբրահամ Պետրոս Ա. Արծիվյանի»՝ կարդացինք ժԱՎԵՏԻՔՈՒ (հուլիս-օգոստոս 1950) միացյալ թիվին մեջ. Այս զույգ ճարեքաստիկ դարադարձներուն առթիվ «հրավեր» կկարդաք «Բովանդակ Հայոցիան զառնալու նախնյաց ամբողջական լույս հավատին, կաթողիկէ միության մեջ»:

Միության մեջ կկայանա Եկեղեցվո պայծառությունը և հոգիներու փրկությունը, ու մենք կկամենայինք, որ Եկեղեցվո բոլոր բարձրաստիճան պաշտոնյաներ իրենց նպատակահետ ունենային ճշմարիտ Միությունը, հոգիներու միությունը, որ իրար կրերն և կմիացնեն տարբեր պայմաններով, վարդապետություններով և դադափարներով իրարմն անջատված մարդեր և ժողովուրդներ:

Սիրեցյալ՝ Նղբայր, Ձեր Հովվական Թուղթի հրատարակման առիթով կուզենք Ձեր

1. Գերաշնորհ Տեր Դերենիկ Եպիսկոպոսի ներկա «Պատասխան»ը տպագրված է առանձին գրքույկով, որից մենք արտատպում ենք փոքր ինչ կրճատված ձևով. — ԵՄՐ.:

եզրակացություններն ու հրավերը, թեյադրություններն ու խորհրդածությունները, քրիստոնեական անաչառ ոգիով և պատմական ստուգությանց ու ճշմարտությանց հիման վրա նկատողության առնել հավատացյալ ժողովուրդի լուսաբանման համար:

...Ձեր Հովվական Թուղթի Ողջույնի մեջ Ձեր Վսեմության համար կրսեք «Կաթողիկոս Հայոց ուղղափառացու» Ընթերցողներ այն տպավորությունը պիտի ունենան անշուշտ, որ Դուք հայ ուղղափառ մեծագույն դանդաժին կաթողիկոսն եք:

Ուղղափառ կամ Որբողոքս կնշանակեն ուղիղ դավանություն ունեցող. Հինն ի վեր այդ ստորոգելին տրված է հույն, հայ, ասորի, ղպտի և հաբեշ եկեղեցիներու փոսպատրիարքի օրով, Թ. դարուն, Բրք Արեմոսքը — այսինքն Պապական Եկեղեցին — բաժնվեցավ Արևելյան Եկեղեցիներն, Կաթողիկ բառը սկսավ գործածել իրեն համար և զայն յուրացուց. իսկ Արևելք՝ Որբողոքս բառը:

Կաթողիկ միախոնարներ՝ Բենեդիկտյան, Յրանյիսկյան կամ Նզվիտ, որոնք Արևելք եկան և Ուղղափառ Եկեղեցիներն հավատացյալներ որսալով համայնքներ կազմեցին, Կաթողիկ անունը տվին այդ համայնքներուն, ինչպես արինակ՝ հայ կաթողիկ, հույն կաթողիկ, ղպտի և ասորի կաթողիկ: Կաթողիկ և

մանավանդ ուղղափառ բառը բնավ չգործածեցին:

Հոռմծական Եկեղեցին ամենևին իրավունք չուներ իրեն համար Կաթողիկ մակդիրը գործածելու, որովհետև Կաթողիկ կնշանակե տիեզերական, ընդհանրական, մինչ Պապական Եկեղեցին, բուն Տիեզերական Եկեղեցին բաժնավելով կազմած էր ուրույն հատված մը: Կաթողիկ բառը ուրեմն երբ Պապական Եկեղեցվո համար դործածվի, կնշանակե «Արևմտյան Հերձվածքը, որ ստեղծվեցավ Միջին դարուն: Այդ շերձվածքը քաղաքականապես գորանալով, Միջին դարերն սկսյալ աշխարհի զանազան կողմերը սկսավ պրոպագանդիստ կրոնավորները դրվել ժողովուրդները Հոռմի Աթոռին և անոր պետին գերիշխանության ներքե բերելու համար: Հոռմի կողմն դրված կրոնավորները, թե ի՞նչ ոտնձգություններով, անխոստովանելի միջոցներով, սպառնալիքով և հայաժանքներով կատարեցին իրենց պաշտոնը, ծանոթ է բոլոր աշխարհին. այդ մասին մենք կլուենք: Այդ առաքելությանց կամ ավելի՛ ճիշտը՝ սկրոնական ասպատակությանց՝ արդյունքը Հայոց մեջ այն եղավ, որ ԺԸ. դարուն Հոռմեական առանձին համայնք մը ստեղծվեցավ: Այդ համայնքը, որուն հետևողները անշան թիվ մը կկազմեն, Կաթողիկ անունը առին իրենց վրա՝ հետևելով Հոռմի օրինակին: Արդեն Հոռմեական Եկեղեցին բաժնավելով Ընդհանրական Կաթողիկ Եկեղեցին առանձին հերձված մը կազմած էր, իր վրա առնելով Վաթողիկ անունը, Հայոց Եկեղեցվո ծոցն հեռացող հայ պապադավաններն ալ այդ հերձվածին ենթարկվեցան և բացարձակ հնազանդություն ու հպատակություն հայտարարեցին:

...Հետևաբար, Մերելի՛ Նղբայր, երբ զՁեզ կանվանեք Կաթողիկոս Հայոց Ուղղափառաց, պատմության դեմ մեղանշած կըլլաք, որովհետև Ձեր պատրիարքական աթոռը, որուն հաստատման երկուհարյուրամյակը տոնեցիք և որուն Գահակալն եք այժմ, միայն ու միայն ափ մը հայ հոռմեական պապականներու աթոռն է, որուն ծաղման մասին քիչ վերջ պիտի խոսինք: Դուք իրենց Մայրենի Եկեղեցին հեռացած և Հոռմի հպատակած փոքր հայ համայնքի մը կրոնապետն անքան մեծ ուղիղ տիտղոսն է Կիլիկիո Հայ Պապականներու «Պատրիարք» և ոչ թե Կաթողիկոս Հայոց Ուղղափառաց: Պատրիարք բառն ալ չակերտեցինք, որովհետև, ինչպես պատմական տվյալներով պիտի պայացուցանենք, Արծիվյանի պատրիարքությունը անվավեր էր. ուստի Դուք, որպես անոր Ժե, հաշորդը,

պատրիարքություն կրնեք ոչ կանոնական դրությամբ համեմատ:



...Պատվակա՛ն Նղբայր, Դուք Ձեր Հովական Թուղթին առաջին նախադասության մեջ Արահամ Պետրոս Ա. Արծիվյանի համար կըսեք. «Նախապես Տանն Կիլիկիո վերադարձ Կաթողիկ կարողիկոսական Աթոռիս»: Ձայն կանվանեք «աստվածարայս». զինք կմիացնեք Մխիթար Սեբաստացիի հետ և կգրեք թե «պատմությունն ալ ոսկի տառերով առնանագրած ու պահած է անոնց փառելի անունները»:

...Արահամ Արծիվյան ծնած է Այնթապ 1679-ին, 1706-ին կուսակրոն քահանա ձեռնադրված է և 1710-ին եպիսկոպոսական աստիճան ստացած է Պետրոս Բերիացիին՝ մականվանյալ Պիծակ, որ 1701-ին Բերիո մեջ նստավ որպես հակաթոռ Կիլիկիո Հայոց Կաթողիկոսության: Այդ ժամանակ Սսո օրինավոր կաթողիկոսն էր Մատթեոս Կեսարացի՝ մականվանյալ Սարի, որ ամենևին չհրժարեցավ իր աթոռն և հանձն չառավ կաթողիկոսական իրավունքները բաժնել: Արծիվյան ձեռնադրվեցավ հակաթոռ Պիծակեն՝ որպես Բերիո Առաջնորդ:

...Արծիվյան 1722-ին Լիբանանի Անտոնյանց վանքը փոխադրվեցավ: Ան պատահական պարագաներո զգուցելով, հետագային կրցավ ինքզինք իբրև Անտոնյանց Միաբանություն շիմադիր ալ կարծել տալ:

1738-ին, զեկտեմբերի 30-ին, Բերիո մեջ հայ կաթողիկներ կուսակալին հրամանով Եկեղեցի մը ձեռք ձգեցին և զատա պաշտոն վարելու արտոնվեցան, ու այս առթիվ Արահամ Արծիվյանը Լիբանանեն՝ Անտոնյանց վանքեն՝ բերել տվին: Արծիվյան 1739 զեկտեմբեր 4-ին Բերիա հասավ: Սակայն երեք ամիս պահվեցավ, մինչև որ ապահով եղավ, որ նորեն արկածի մը պիտի չհանդիպի:

Արծիվյան կանուխն Հայ Կաթողիկոսյան ինքնուրույն դիրք մը ստեղծելու գաղափարը հղացած էր, Կոստանդնուպոլսո մեջ այդպիսի ծրագիր մը հաջողցնել հնար չէր, մյուս վանդ Կոլոտի պատրիարքության և նալյանի փոխանորդության օրով: Ուստի մտածեց Կիլիկիո Կաթողիկոսություն մը կազմակերպել, մանավանդ որ ինքն ալ Կիլիկիո Կաթողիկոսության սահմանին մեջ կապեր: Բայց ապիկա անհնար էր, որովհետև իրեն գործակից կամ կամակից ոչ մեկ եպիսկոպոս ուներ Կիլիկյան թեմերու մեջ: Քրիստոնյա Եկեղեցվո օրինաց հակառակ, առանց որևէ ժողովի կամ օրինական քննության, այլ միայն քա-

նի մը քահանաներու և արեղաներու ներկայությամբ կաթողիկոսություն կհռչակե։ Այս ապօրեն արարքով ալ չգոհանալով, 1740 մայիս 3-ին, լատին եկեղեցւո մեջ, երկու օտարածես ընթերցականերով, Հակոբ վարդապետ Հովսեփյանը եպիսկոպոս կձեռնադրե։ Հունիսի 11-ին Խահակ վարդապետ Բարսեղյանը Քիլիսի եպիսկոպոս կձեռնադրե։ Իսկ նոյեմբերի 23-ին, իր երկու ձեռնադրածներով, Մելքոն Թուխմանյան վարդապետ Մումբուշի եպիսկոպոս կձեռնադրե։ Երեք օր վերջ, նոյեմբերի 26-ին (1740), իր ձեռնադրած երեք եպիսկոպոսներով կաթողիկոս կձեռնադրվի։ Ընթերցողներ կտեսնեն ուրեմն թե ի՞նչպես ապօրեն միջոցներով հաստատվեցավ Կիլիկիո Հայ Կաթողիկ կամ Հոռոմեական Պատրիարքությունը։ Սակայն ոչ միայն Արծիվյանի կաթողիկոսությունը անկանոն, անվավեր և ապօրեն է, այլև իր եպիսկոպոսությունն իսկ, որովհետև ձեռնադրված է հակաթոռ Պիծակ կաթողիկոսին։ Պարբերու ընթացքին, Քրիստոնյա Եկեղեցին միշտ և ամենուրեք անվավեր նկատած է հակաթոռի մը ձեռնադրությունը և անոր կատարած ձեռնադրությունները։

...Կարծեցյալ կաթողիկոսության հռչակումն անմիջապես ետք, 1740 դեկտեմբերին, Արծիվյան կշանա Հոռոմ երթալ, Կհանդիպի դժվարությունաց, բայց հոն կհասնի երկու տարի վերջ, Կներկայանա Պապին, ծունկի կուգան և կհամբուրեն անոր ոտքը և հավատու հպատակության դավանություն մը կկարդա։ Այդ դավանությունը Օթարթե ու Պահլավունի Սուրբ Հայրապետներու հավատքը չէր, ինչպես կզրեք, այլ Պապական Եկեղեցւո դավանանքը։ Հետեաբար Արծիվյան այս կերպով կուրանար Սուրբ Լուսավորչի և մեր Սրբազան Հայրապետներու լույս հավատքը։ Ուրեմն, Սրբազան Եղբայր, Դուք երբ արձագանք կըլլաք Արծիվյանի «պատգամին», կնշանակե թե կոչ կուղղեք հայ ժողովուրդին՝ ուրանալ իր դարավոր հավատքը և ընդունիլ Պապական Եկեղեցւո դավանությունը։ Հա՛նախակի կրկնված և ժամանակավրէպ Ձեր այս հրավերը անշուշտ արձագանք պիտի չգտնե որեւէ հայու սիրտին մեջ, որ կապված է իր Մայր Եկեղեցիին և իր սուրբ հավատքին։

Կես մը ևս, Շնորհազա՛րդ Եղբայր, Ձեր կաթողիկոս տիտղոսն ալ պատմական վավերականություն չի կրեր, որովհետև պապական պաշտոնադրանքուն մեջ Աբրահամ Արծիվյան մի՛այն Պատրիարք Կիլիկիո կկոչվի. կաթողիկոս բառի հիշատակություն չկա։ Արծիվյան, երբ ինքզինքը Ամենայն Հայոց Կաթողիկոս կշանար ցուցնել, Մխիթար Աբ-

րահայր արդեն անոր կզգացներ այդ հավակնության անհիմն ըլլալը և հազիվ թե անոր համար կարելի կգտներ Կիլիկիո պատրարքությունը (տե՛ս Վարդ Մխիթարաւ, էջ 469)։ Երբ Ձեր փառաբանած Մխիթարն իսկ Արծիվյանը պատրիարք կձանշեա, Դուք, որ զՁեզ Արծիվյանի Աթոռը բազմող պետի կրնդունիք, ինչպե՛ս կրնաք Ձեզի համար Կաթողիկոս Հայոց Ուղղափառաց՝ դրել։

Վերոգրյալ պատմական իրողություններն կրնաք եզրակացնել, որ Արծիվյանի կաթողիկոսությունը անվավեր էր և անկանոն արարքի մը արդուց և թե իր կաթողիկոսությունն անվանածը ոչ մեկ օրինավոր կապունի Կիլիկիո Կաթողիկոսության հետ։ ...Պատմական ճշմարտությունը սա՛ է. Կիլիկիո հայ կաթողիկ պատրիարքության մը կազմությունը Պապական Եկեղեցւո պետին կամքն բխած և պարագաներու հարմարքոված հոռոմեական ստեղծագործություն մըն է և ոչ մեկ առնչություն ունի հայ նվիրապետության հետ և որեւէ հայ Աթոռի հետ։



...Միրանավո՛ր Եղբայր, կզրեք թե Ա. Արծիվյանի և Մ. Սեբաստացիի «նպատակը տարածում կաթողիկե ճշմարտության և նվիրում Հայության բարձրացումին» է։

Կաթողիկե ճշմարտություն։ Գեղեցի՛կ բառ, բայր ո՛չ Մխիթար և ոչ ալ Արծիվյան ունեին կաթողիկե ճշմարտությունը։ Կաթողիկե կնշանակե ընդհանրական, տիեզերական, երկուքն ալ ուրացան կաթողիկե ընդհանուր Տիեզերական Եկեղեցին. հպատակներ և կամակոր գործակալներ դարձան Հոռոմի Պապին։ Մեղբոսներք Ավիտիքն, Մխիթարի հոսստովանանքը. «ես կղավանիմ և կընդունիմ այն ամեն ինչ, զոր կղավանի և կընդունի Սուրբ Կաթողիկե և Հոռոմեական Եկեղեցին, և կմեծեմ ամեն ինչ, զոր ա՛ն կմեծեմ։ Ինչպես իմ ամբողջ կյանքիս ընթացքին զիս պարտավոր համարած եմ հնազանդելու ճշմարտությանը, ինչպես իմ ամբողջ կյանքիս ընթացքին ճշմարտությանը» (Ավետիսի, ԺԺ. տառի, թիվ 9—10, էջ 155—156)։

...Հոռոմի Պապին ամբողջ սրտով ձնթարկվելով, միթե՛ կաթողիկե ճշմարտությունը կտարածվի։ Արծիվյան և Մխիթար ճեղք ստեղծեցին Հայության մեջ. բաժնվեցան Հայ Եկեղեցիին. ուրեմն կաթողիկե ճշմար-

տույթյունը տարածած՝ եղան այդ կերպով, Հայության մեջ բաժանում հառաջացնելով, ինչպես կրնան նվիրվել Հայության բարձրացումին, Անոնք Հայության բարձրացումին սատարելու և ծառայելու տեղ ջանացին — մանավանդ իրենց հաշորդները — ամենն անարգ միջոցներու դիմել Հայությունը պառակտելու և զայն պապականության առաջնորդելու:

...Ազգեր, Սրբազան նղբայր, «Էրապի Արարեամ և Մխիթար... կծաղկեցնեի՞ն վերստին Հայության մեջ նախնայաց լուսավոր և ամբողջական հավատքը: Բայց այս երկուքն ալ մեր նախնիքներու լուսավոր և ամբողջական հավատքը շաղկեցուցին, Անոնց բուն նպատակը եղած է Հոռմի Եկեղեցվուն հավատքը և վարդապետությունը տարածել, Հայոց մեջ և Հայուն Եկեղեցին ենթարկել Պապի գերիշխանության, Իրենց խոսքերը շատ հստակ են. Մխիթարեն մեջբերում որինք արդեն. բացատրության չեն կարողորդ այդ տողերը. իսկ Արծիվյան Արարհամ կրսն, թե իր նպատակն է պայծառուրիս և անույն սրբոյ հաւատոյ հոռմվելակալել: Ուրեմն Արծիվյան և Մխիթար ոչ թե մեր նախնայաց սուրբ և ուղղափառ հավատքը ծաղկեցուցին, այլ ջանացին խեղաթյուրել զայն հոռմեաղական հավատալիքներով: Անոնք իրենց նախորդներով և հետևորդներով Եկեղեցւոյան-կյուրեղյան ուղղափառ վարդապետության տեղ սկսան քարոզել ինքզամուտ քաղկեդոնիկ երկաթեակ վարդապետություն մը: Հոռմեական Քավարանի հետսամուտ խնդիրներով և «յնորդոյ» բանաձևերով պզտորեցին հայ հավատացալիներուն միտքերն ու հոգիները: Հետեաբար, Ձե՛րդ Վսեմություն, Դուք բոլորովին կայափոխեք ճշմարտությունը:



...Սրբազան նղբայր, Մխիթարեն հետևյալ մեջբերումը կրնեք. «Թեպետ ըստ ամենայնի կնպատակեցնեմ ինքզինքս Հոռմա Գահուն հնազանդության ներքև, ինչպես օրինակ տվալ ինձ մեր Ս. Հայր Գրիգոր Լուսավորիչ...»: Մխիթարի նման հայ կաթողիկոսներ միշտ միևնույն հանկերգը կրկնած են ըսելով թե Ս. Գրիգոր Լուսավորիչ Հոռմ գնաց և Պապին հնազանդություն հայտնեց, Բազմիցս հերքված է այս առասպելը. զայն նորեն լսողներ կրնան հեգնանքի ժպիտ մը ունենալ: Ներկայացնենք պատմական իրողությունը:

313-ին Կոստանդիանոս կայսր Միլանի հրովարտակով քրիստոնեությունը ազատ կրոն հռչակեց, Բայց քրիստոնեությունը կա-

տարյալ ազատություն ստացալ 323-ին, երբ Կոստանդիանոս հաղթեց Լիկիանոսին, որ Արևելքի կայսրն էր և հեթանոսության պաշտպանը: Ազաթանգեղոս (ՃԻՁ հատված) կպատմե թե երբ Հայոց Տրդատ թագավորը Կոստանդիանոսի քրիստոնեություն ընդունելը կլսե, իրեն հետ կառնե Ս. Գրիգոր Լուսավորիչը, Արիստակեսը, Աղբիանոսը, 13 նախարարներ և յոթանասուն հազար զորք, կերթա Հոռմ խնդակցություն հայտնելու և դաշնագիր կկնքե Կոստանդիանոսի հետ: Ազաթանգեղոսեն առնելով Խորենացին ալ անցողակի կակնարկե (Բ. Գալուսյուն Զ. դ.). Սակայն հոս Ս. Լուսավորչի Հոռմ երթալու մասին ըսն մը չէ գրված:

Դժվար է որոշել Կոստանդիանոսի քրիստոնեություն ընդունելու թվականը. եթե 313-ը նկատենք, այն ատեն Կոստանդիանոս միայն Արևմուտքի կայսրն էր, իսկ Տրդատ Արևելքի կայսեր՝ Լիկիանոսի իշխանության տակ էր. ուստի այդքան բազմաթիվ հետևորդներով և զորքով Լիկիանոսի իշխանության սահմաններու մեջն անցնելով Հոռմ երթալը անպատեհ էր, որովհետև հայ թագավորը իր հարաբերությունը կպահեր Արևելքի կայսրներուն հետ և Արևմուտքի հետ հարաբերություն չուներ: Կոստանդիանոս միայն 323-են ետքը սկսավ Արևելքի մեջ իշխել, ու մինչև այն ատեն Լիկիանոսն էր տիրողը և քրիստոնեությունը հալածողը. ուստի ոչ մեկ պատեհառ չէր կրնար ըլլալ Տրդատի և Գրիգորի Հոռմ երթալուն:

Իսկ եթե 323 թվականը նկատենք Կոստանդիանոսի քրիստոնեություն ընդունելը, հայտնի է, որ այդ ատենները Կոստանդիանոս մեծ մասամբ Արևելք կգտնվեր, Նիկոմիդիո մեջ, և ուրեմն Հայոց թագավորի այցը չէր կրնար Հոռմ ընդունած ըլլալ: Հիշենք նաև, որ Գրիգոր Լուսավորիչ հանրային կյանքե կխուսափեր. իր վերջին տարիները ճգնությամբ անցուց, Նույնիսկ Նիկիո տեղեկերական ժողովին (325 թ.) չգնաց. ուստի չէր կրնար մինչև Հոռմ գացած ըլլալ: Դիտելի է, որ Մ. Խորենացին Ազաթանգեղոսի պատմությունը իր առաջ ունենալով՝ Լուսավորչի Հոռմ ճամբորդելը չէ գրած. ուստի կամ զայն կեղծ և ստահող բան մը դատած է, կամ ուղեորության հատվածը Ազաթանգեղոսին մեջ հետո ներմուծված է:

Հավանորեն Հոռմ երթալու առասպելին հիմ ծառայած է 64 թվին Տրդատ Ա. Հայոց թագավորի ներոն Կայսեր օրով Հոռմ երթալու և հոն մեծ շուքով ընդունվելու պատմությունը: Այսպես Ա. դարու եղելություն մը Դ. դարու դեպք մը նկատված է, ժամանակի հարմար պարագաներն ալ իր վրա առնելով:



...Սիրեցյալ՝ Եղբայր, Ձեր «Նովվակյան Թուրքիին մեջ Պետրոս Առաքյալը քանիցս «Առաքելապետ» կանվանեք, և կգրեք թե Հիսուս «հատկապես ալոքած էր Սիմոն Պետրոսի համար, զոր պիտի կարգեր ճովիվ բովանդակ հավատացյալ իր հոտին և հաստատիչ առաքելական դասուն»:

Դարերի ի վեր Հռոմեական Եկեղեցվո կրկնած հանկերգն է այս: Ձեր Վսեմությունն այլ որպես «Հռոմեական Եկեղեցվո երեց կարդինալ»-ի պաշտոնն և նույնիսկ ստիպմամբ պետք է, որ հիշեցնեք Ձեր հավատացյալներուն թե Պետրոս նախապատվություն ունի մյուս առաքյալներուն վրա, «Առաքելապետ» է և նույնիսկ «հաստատիչ առաքելական դասուն»:

Ասիկա ոչ միայն Քրիստոնեական Եկեղեցվո բուն ոգովուն և ճշմարիտ դավանութան հակառակ է, այլ նաև՝ ողջմտության: Ավետարաններ և Առաքելական Թուղթերը ոչ «առաքելապետ», ոչ «առաքելապետական իշխանություն», և ոչ ալ «հաստատիչ առաքելական դասուն» բառերն ու դադափարներն ունին, Պետրոս առաքյալի միտքին մեջ անդամ այսպիսի հավակնոտ դադափարներ տեղ պետք չէ բռնած ըլլան:

Քրիստոնյա Եկեղեցին բոլոր առաքյալները հավասարապատիվ ճանչցած է: Եկեղեցվո հայրերուն ողջմիտ վարդապետությունը սա է թե բոլոր առաքյալներն ունին իշխանությունը ստացան Քրիստոսից, Վերնատան մեջ Ս. Հոգիով լեցվեցան, քաջարար քարոզեցին քրիստոնեությունը և հանդիսացան Եկեղեցվո սյուների: Միայն Պապական Եկեղեցին է, որ հինն ի վեր Առաքելապետ կոչվանի Պետրոսը, որպեսզի ատով ցույց տա թե Պապը Եկեղեցվո գերագույն պետն է, և ախն նախապատվություն և գլխավորություն ունի Եկեղեցվո մյուս պետերուն վրա:

Լավ ըմբռնեք Ավետարանի ոգին: Առաքելության կամ գլխավորության խնդիրը առաջին օրեն ընդվեցավ, երբ Մեծ Վարդապետը ըսավ իր աշակերտներուն. «Որ կամիցի ի ձեզ առաջին լինել, եղիցի ձեր ծառայ» (Մատթ. Ի. 27): Առաքյալներուն մեջ մեծ ու պզտիկ չկար, ամենքը հավասար էին: Երբ անոնց մեջ մեծության խնդիր ծագեցավ, Քրիստոս այդ մտածումը հեռացուց իրենցմե (տե՛ս Մատթ. ԺԸ. 1—5): Եթե Պետրոս առաքելապետական իշխանություն ունեցած ըլլար, այսինքն՝ գերազա՛հ իրավասություն մյուս առաքյալներուն վրա, Քրիստոս այն ժամանակ կ'պեղելու և արձակելու իշխանությունը միա՛յն Պետրոսին պիտի տար և ոչ

թե ամենուն, ինչպես գրված է. «Ամեն ասեմ ձեզ, զոր կ'ապիցեի յերկրի, եղիցի կ'ապեալ յերկինս, և զոր արձակիցեի յերկրի, եղիցի արձակեալ յերկինս» (Մատթ. ԺԸ. 18): Մեր Փրկիչը իր բոլոր առաքյալներուն հավասարապես ըսավ. «Առէ՛ք Հոգի Սուրբ» (Հովհ. Ի. 22): Մեկուն քիչ և ուրիշին շատ շտվով Քրիստոս իր Համարածման ժամանակ ամենուն հավասարապես նույն առաքելության պաշտոնը տվավ. «Գնացե՛ք աշուհներս, աշակերտեցե՛ք զամենայն հերթանոսս, մկրտեցե՛ք գնոսս յանուն Հոր և Որդոյ և Հոգւոյն Սրբոյ: Ուսուցե՛ք եոցա պահել զամենայն ու ինչ պատուիրեցի ձեզ, և ահա մատիկ ես լնդ ձեզ եմ զամենայն առօրս, մինչև ի կատարած աշխարհի» (Մատթ. ԻԸ. 19—20): Այս ամենուն մեջ կտեսնվի, որ ո՛չ միայն Պետրոսի որե՛է առաքելապետական իշխանություն կամ պաշտոն տալու հիշատակություն չկա, այլ նաև Քրիստոսի կողմէ հատկապես դատապարտված է իր աշակերտներին որե՛է մեկուն հավակնությունը առաջին կամ պետ ըլլալու մյուսներուն վրա:

...Եթե ուզեինք տառացի մեկնություններով փաստեր բերել, պիտի դիտենք, որ Ավետարանի մեջ Պետրոս ո՛չ միայն առաքելապետ կոչված չէ, այլ «սատանա»։ Եւ նա (Հիսուս) դարձեալ ի Պետրոս ասէ, երբ յետս իմ, սատանայ, զայրակոյրիւն իմ ես. զի ոչ խորհիս զԱստուծոյսն, այլ՝ զմարդկան» (Մատթ. ԺԶ. 23): Բայց այս կարգի խաղերու փոցուն ըլլալը կզգանք ըստ բավականի, բնելու համար քա՛վ լիցի՝ և ընդունելու թե անիկա Քրիստոսի երկոտասան ճշմարիտ առաքյալներին մեկը հանդիսացավ, հակառակ որ երեցս ուրացեր էր իր Տերը:

Միբանա՛վ'ը Եղբայր, կգրեք թե Հիսուս «Հատկապես աղոթած էր Սիմոն Պետրոսի համար, զոր պիտի կարգեր հովիվ բովանդակ հավատացյալ իր հոտին և հաստատիչ առաքելական դասուն», «Որպեսզի յպակսի բոլ հավատեղ և դուն, երբ դարձի գաս, հաստատես եղբայրներդ» (Ղուկ. ԻԲ. 32): Պետրոսի ուղղված այս խոսքերը ուրիշ բան չեն, եթե ոչ Պետրոսի ուրացութան գուշակությունը: Քրիստոս կ'ըսե. «Սիմովն, Սիմովն, ահա սատանայ խնդրեաց զեզ խաբարել իբրև գգոհեան», այսինքն՝ «Ո՛վ Սիմոն, սատանան ուզեց քեզ ցորենի պես մաղել անցնելու»:

..Ուստի Հիսուս հատկապես աղոթած էր Պետրոսի ուրացության և գործած սխալներուն համար, և կուզեր, որ Պետրոս զղջա և այդ զղջումը իր եղբայրներուն ի շինություն ըլլա և ոչ թե իր ուրացության պատճառով դաժնակոյն իրեն: Եկեղեցվո Հայրեր այս-

դիս մեկնած են Ավետարանի վերահիշյալ խոսքերը ու ալսպես հավատացած և բարոյութուն են:

Ավելին՝ Պապական նկեղեցվո քննադատները Բարեկարգության շրջանին սկսյալ մինչև մեր օրերը հիմնովին հերքեցին և կհերքեն Պետրոս առաքյալի Հոռմ գացած և Հոռմի նկեղեցին հիմնած ըլլալու ավանդութիւնը:

Ավետարաններու և Առաքելական Թուղթնուն մեջ որեւէ հիշատակութիւն չկա Պետրոսի Հոռմ երթալուն և հոն եկեղեցի հիմնելու մասին: Եթե ան Հոռմ գացած ըլլար, այդ պարագան անպայման պիտի հիշվեր Գործք Առաքելոցի մեջ, որովհետև այդ գիրքը կխոսի Պետրոսի գործունեութան մասին: Նույնիսկ Հոռմայեցիոց Թուղթը, որ մնակ վավերական աղբյուրն է Հոռմի նկեղեցվո ծագման մասին, որեւէ ակնարկութիւն չունի Պետրոսի Հոռմի մեջ քարոզութեան, Գեթ Պոպոս առաքյալ, որ այնքան ավետարանական աշխատանք կատարեց Հոռմի մեջ, ակնարկութիւն մը ըրած կըլլար Պետրոսի, եթե որեւէ կերպով ան Հոռմ գտնված ըլլար: Իրողութիւնը սա է. պատմական որեւէ փաստ դուրսէն չունի Պետրոս առաքյալի Հոռմ ավետարանած և հոն եկեղեցի հաստատած ըլլալուն մասին: Այդ բոլորը սոսկ ավանդութիւն են: Նույնիսկ կաթոլիկ պատմագիրներ իզուր ջանացած են Պետրոսի Հոռմ երթալու ճշգրիտ թվական մը նշանակել: Հոռմեական նկեղեցվո 67—157 թվականներուն նշանակած ինը պապերուն ժամանակագրութիւնն անգամ անստույգ է: Նկեղեցական Հայրեր անգամ, ինչպես Կղեմես, Բառնաբաս, Հերմաս, Իգնատիոս և Պողիկարպոս, որոնք իրենց գրութեանց մեջ կականարեն Պետրոսի, ոչ մեկ խոսք ունին անոր Հոռմ երթալուն մասին: Իսկ Օգոստինոս և Ոսկերիան Պետրոսի գլխավորութիւնը կամ առաքելապետութիւնը կմերժեն: Երբ այս է իրողութիւնը, Պետրոսի վերագրված առաքելապետութիւնը և անով Հոռմի գահուն ինքնասահման առաջնութիւնը բոլորովին անհիմն չեն դառնար:

... Պետրոս ոչ մեկ ասին ինքզինք առաքյալներին վեր կամ անոնց գլուխը դասեց: Առաքելական Թուղթերուն մեջ ալ որեւէ հիշատակութիւն չկա այս մասին: Ուրեմն «առաքելապետական», «առաքելապետական իշխանութիւն» թառերը քրիստոսական ոգւով օտար և նույնիսկ հակառակ հայտարարութիւններ են:

«Իրեցյալ» նորայր, կգրէ: «Խարոդիկեությունը կներկայացվի իր օտարացուցիչ և վնասակար Հայութեան»:

«Անա նախապաշարում մը աղիտաբեր, որուն փարատումին պիտի ուզեինք որ ծառայեր սույն Հովականեր... Այս եղանակով, ի վերջո, մենք կկատարենք մեր հովական պաշտոնին մեծ պարտականություններն մեկը, որ է զրահավորել Ձեզ, որպէսզի առաքելապետին խոսքին համաձայն «պատրաստ ըլլալ» պատասխանելու ամեն անո, որ պիտի հարցնէ Ձեր հօյսին պատճառը» (Ս. Պետրոս Գ. 15) «և միանգամայն բերել մերովսանց լուսավորություն մը բովանդակ Հայութեան, որ իրավունք ունի ճանչնալու նշմարաւորութիւնը և անոյ մասին զատողություն կազմելու, ձերբազատված՝ դարավոր և դիտումնավոր սխալ կտրիմներէ»:

Ձեր այս խոսքերին ետք ցույց կուտաք Քրիստոսի ճշմարիտ նշանները, կրօնատրեք թիւի՜նչ կնշանակէ Ընդհանրական և Կաթողիկէ նկեղեցի, որինակներ տալով Հին և Նոր Կտակարաններն, ինչպես նաև հայ և օտար հայրերու գրութիւններն: Այս բոլորն վերջ կնորակացնէք. «Հոռմեական Կաթոլիկ նկեղեցին է Քրիստոսի Տիեզերական նկեղեցին»: Դուք Ձեր ըրած մեջբերումներով կաթողիկէ և կաթողիկէութիւն թառերուն հոռմեական և հոռմեականութիւն իմաստը կուտաք: Կաթողիկէ կնշանակէ Տիեզերական, Ընդհանրական, աշխարհասիւրբ նկեղեցին, որ իր մեջ կպարունակէ քրիստոնեական բոլոր եկեղեցիները — հայ, հույն, ղպտի, ասորի, հոռմեական և այլն առանց ազգային և աշխարհագրական խտրութեան: Հոռմեական նկեղեցին թեպետ սերտված մ'է Քրիստոնեական նկեղեցվո մեջ՝ ԿԿԱԶՄԵ ՄԵԿ ՄԱՍԸ ՄԻ, Ընդհանրական, Առաքելական և Աւուր նկեղեցվո, ինչպես է օրինակ հայ և հույն եկեղեցին: ՄԱՍը կշփոթէ ԱՄԲՈՂԶին հետ:

Մինչև 451 թվականը, այսինքն Քաղկեդոնի ժողովին գումարումը, քրիստոնյա բոլոր եկեղեցիները միութիւն մը կկազմեն դավանական գլխավոր խնդիրներու մեջ: Անոնց միջև գերագահութեան խնդիր չկար: Անոնք բոլորն ալ մեկ մասն էին Կաթողիկէ — Տիեզերական կամ Ընդհանրական — նկեղեցվո: Բոլոր եկեղեցիներ կընդունէին Նիկիո, Կոստանդնուպոլսո և Նիքիոսի Տիեզերական ժողովները և անոնց որոշումները: Նկեղեցվո այդ միութիւնը խախտեցավ Քաղկեդոնի Ժողովով՝ 451 թվին: Հոռմի նկեղեցին ժողովին ընդունիլ տվավ Առն Պապի Տոմարը, որ երկարնակ վարդապետութեան ջատագովականն

էր, այսինքն Հիսուսի Քրիստոսի մարդկության և աստվածության կատարյալ բաժանումը, ինչն իր տոմարին մեջ կհայտարարեւ: «Կարասցէ մեռանել ըստ միոյ և ոչ կարասցէ մեռանել ըստ միւսոյ», թե «Բանն ընդգործէ զոր Բանին է և Մարմինն կառուի զոր մարմնոյն է»: Այս որոշման միայն հույներ համաձայնեցան. իսկ Հայոց Աթոռը, Անտիոքի և Աղեքսանդրիո մեծ և պատմական Աթոռները մերժեցին Քաղկեդոնի վարդապետության վճիռը, նետադրական հերետիկոսության միտում տեսնելով անոր մեջ, որովհետև ինչն Պապը իր Տոմարով և իրեն հետևող քաղկեդոնիկներ Քրիստոսի յուրաքանչյուր բնությունը կանոնավորեին, և երկու անձնավորյալ բնություններ նույն Քրիստոսը կբաժնեն իր կու առանձին մասերու, էությանց, Այսպես Քրիստոսի մեջ միության կապը կխախտվեր:

Հռոմեական Եկեղեցին իր այս վարդապետական սխալ ընթացքով Տիեզերական Կաթողիկէ Եկեղեցին բաժնավեցավ: Այդ բաժանումը ավելի շփոթեցավ հունաց Փոտ Պատրիարքի օրով, «և յՈրդոյն» բանաձևի պատճառով: ...Արդ, Հայ Եկեղեցին՝ արեւելյան ուրիշ եկեղեցիներու հետ՝ եկեղեցվո իրողական ընդհանրականության դարերու ուղիղ վարդապետությանց իր հավատարմությամբ այդ ընդհանրականությունը գեթ տեսականորեն շարունակողն է հետևաբար: Ու ձթե կաթողիկէություն վերադարձի խնդիրը հարուցվի, ինչպես կուզեք ընել հետսամուտ վարդապետություններով, հեռացողներն են, որ պետք է վերադառնան ավանդական ընդհանրական վարդապետությանց շարունակողներուն և ոչ թե ասոնք՝ անոնց, Հայ Եկեղեցին չէ, որ վերադառնալու է կաթողիկէ միության, որմն չէ հեռացած երբեք, այլ Հռոմեական Եկեղեցին պետք է վերադառնա այդ ընդհանրականության հավատարմ մնացած եկեղեցիներու խումբին:

...Արքայա՛ն Եղբայր, երբ այս բոլոր խոդությունները ժամանակի ընթացքին և տակավին մեր օրերուն շատերու կողմեն հայտարարված և փաստված են, Դուք դա՛րձյալ հին հանկեղդը փրկե՛ք: Հռոմեական Կաթողիկէ Եկեղեցին է Քրիստոսի Տիեզերական Եկեղեցին:

Դուք Ձեր գրությամբ փոխանակ յուսավորություն մը բերելու, ավելի կպտտորեք խաղաղ մտքերը և պատճառ կհանդիսանաք անսիրելության և անհասկացողության Ձեր օաղիտաբեր նախապաշարումներով: Ավելի լավ պիտի լըլլա՞ր եթե ասոնց տեղ սիրո, հավատքի և ճշմարտության պատգամները տայիք Ձեր ժողովուրդին:

Կգրեք թե «Արեւելի եկեղեցիները... բաժնավորվալ Միության և Կաթողիկէության բուննե, միշտ ավելի սահմանափակեցին իրենց տեսլականին հորիզոնները: Ընդհակառակը, Արեւելյան թուրք եկեղեցիներ հավատարիմ մնացին և դեռ կմնան Մի, Սուրբ, Կաթողիկէ և Ընդհանրական եկեղեցվո դավանության, Հայ, հույն (երկու բնությանց խնդրն զատ), ասորի, ղպտի և հարեշ եկեղեցիներ նախկին դարերու վճիռ հավատքը պահեցին: Պապական Եկեղեցին էր, որ նրկաբնակ վարդապետություն, և յՈրդոյն բանաձև, Քավարան, Պապի՝ անսխալականություն և տակավին քանի մը ամիս առաջ Մարիամական դավանություն մըն ալ ներմուծեց իր Հավատամքին մեջ: Այսպես շարունակ վարդապետական նոր խնդիրներով և բարդություններով ո՛չ միայն հեռացավ ճշմարիտ Քրիստոնյա Կաթողիկէ Եկեղեցին, այլ պատճառ եղավ բազում անհամաձայնությանց, վեճերու, պայքարներու և անիմանալի խռովությունց, որոնք սոսկում պատճառած են մարդկության:

Կրտսե նաե, որ Արեւելի եկեղեցիները գրեթե անտարբեր և անհաղորդ դարձան Ավետարանին, իսկ մենք Ձեզի հարց կուտանք.— Ո՞ր եկեղեցին, ո՞ր ազգը, ո՞ր ժողովուրդը ավելի նահատակներ տվավ Քրիստոսի Ավետարանին համար քան հայերը, ասորիները, ղպտիները, Այս երեք ազգերն ալ անասելի վայրագություններով շարժվեցան, ողջ-ողջ թաղվեցան՝ իրենց սիրտերն ու հոգիները շատ մոտեն ևսաղորդ ընելուն համար Ավետարանին, Այս ժողովուրդները ոչ թե անտարբեր և անհաղորդ մնացին Ավետարանին հանդեպ, այլ իրենց արյունով երկեցին անոր մագաղաթյա էջերը: Անտարբեր և անհաղորդ մնացողը եղավ Պապական Եկեղեցին, որ երբ կրնար օգնել իր քույր եկեղեցիներուն անոնց տառապանքին մեջ, զլացավ որեւէ օժանդակություն, պայման դրավ, որ անոնք ընդունին իր դավանանքը և իր պետին գերագահությունը: Եթե այդ եկեղեցին հաղորդ ըլլար Ավետարանին և սերտիվ կապված անոր, նմանօրինակ պայմաններ պիտի չառաջարկեր, այլ ավետարանական տգիտվ և եղբայրական սիրով ձեռք պիտի երկարեր անոնց:

...Ցավալի իրողությունը սա է, որ Ավետարանի հանդեպ անտարբերո և անհաղորդ գտնված են ո՛չ թե Արեւելի եկեղեցիներ, այլ Արեւմուտքը, Վատիկանը, իր պապերուն, ավա՞ղ, փարւնոր մեկ մասովը, Բայց անտարբեր և անհաղորդ բաժերը չեն հայտներ այն բոլոր անասելի մոլությունները և անմարդկային արարքները, որոնք շատ ան-

դամ ի հայտ եկած են պատերազմային կյանքին մեջ: Այդ մասին կնախորհրդներ յոհյ, որովհետեւ պատմելը պիտի ըլլար զայնակզեցնել ընթերցողները:

Ըսենք միայն թէ Արեւմուտքի-սլատմութեան քիչ թե շատ ծանոթ մեկը՝ շատ լավ դիտե թե պապական իշխանութիւնը հոգեորդին հետ միաժամանակ զառնալով աշխարհիկ, ինչպեւ հետզհետեւ հեռացավ ավետարանական ոգին՝ քաղաքական տիրակալութիւնը իրեն կեն նպատակ դնելով, որով միւրընդմեջավ հարստամոլութեան, աշխարհակալութեան, պատերազմներու, քաղաքական և դիվանագիտական հոռեգոյն մեքենայութիւններու ցանցի մը մեջ և իր պալատը դարձուց աշխարհիկ պալատներու պատերը անգամ կարմրցնելու աստիճան ավերներու և զեխութեան վայր: Այդ բարքերը չէին դիտարկող պատճառը Արեւմուտքի դեմ հերձակածին: Բողոքականութեան ծնունդին՝ որմեւ պահուցապատ կրօնական պատերազմներու, որոնք դարերով արշուժեցին Եվրոպայի պատմութեան էջերը:



...Սրբազան Եղբայր, կգրեք նորեն. «Ալընքախ է ամենուն, որեւէ բիշ շատ հմուտ են եկեղեցական պատմութեան, քե Պետրոսի Աթոռը, առաջին դարերէն, եղած է միշտ հավատի կեդրոն և նառազայրի բովանդակ աշխարհին մեջ»:

Պատմական վերահիշյալ իրողութիւններեն ընթերցողները տեսան արդեն թե դարերու ընթացքին Պետրոսի Աթոռն և անոր «անսխալ» գահակալներեն, հավատքի և յուսի հետ դեռ ինչեւ ճառագայթներ են...

Մակար Ա. Կաթողիկոսի 1889-ին, Հոռմի և եւ ժ. պապին ուղղած շրջաբերական թուղթն հետեւյալ հատվածը կմեքերենք, որ ցույց կուտա թե ինչպեւ Հոռմ ամենեւին ճշմարտի կեդրոն և նառազայրի աշխարհի եղած չէ: Ճշմարտեւ յաշխարհային ի տիրապետութեան իսկ եպիսկոպոսացն Հոռմայն է տեսանել պապէն յարիս, զորոց զնմանն ոչ ուրեւ է գտանել ի տարեգիրս պատմութեան եկեղեցոյն Քրիստոսի: Անդ բացացեալ խառոյկի հաւատաբնութեան. անդ կենդանական կտառնք և սպանութիւնք անձանց՝ իբր ի հերձաւածս եղելոց. անդ փրկելոցն արեւմբ կենտրոնին հեղմունք արեւմտ առ առս իշխանական արքայն եպիսկոպոսաց և եպիսկոպոսաց Հոռմայն. անդ վաճառումն շնորհաց և սրբութեանց և տնեւսարակ բարձումն ամենայն գրոյ և խաղաղութեան ի շան երկրատու տիրապետութեան զանուն Հոռմայն (Տե՛ս ԱՐԱՐԱՏ, 1889, էջ 73—74):

Սրբազան Եղբայր, Ձեր հավատացայեւորսն կգրեք թե Պետրոսի Աթոռը... միշտ մղված է տանելու Քրիստոսի անունը ամեն տեղ, ի զին ամեն գոհուլոյթյան և իր գալակներուն արյան իսկ, միշտ ձգտելով իրադրեւելու իր երկնավոր փեսային բաղձանքը և հրամայը՝ «Ձի երկնքին ԱՄԵՆԵԲԵՆՆ ՄԻՆՈՏ ՆԻ ՄԻՆՈՒԻԻ»:

Միշտ է, որ Հոռմեական եկեղեցին աշխարհի զանազան կողմերը շանացած է քարոզել քրիստոնեւութիւնը. պետք չէ ուրանք սակայն, որ ճշմարիտ քրիստոնեւութեան տեղ այն հաճախ պապական վարդապետութիւններ տարածած է: Ըստ Ձեզի՝ Հոռմեական եկեղեցին միշտ ձգտած է իրադրեւել Քրիստոսի հրամանը՝ «Գիւ լիլլիցին ամենեւեւ մի հօտ և մի հովիւ»: Կհարցընենք, ո՞ր դարուն, ո՞ր, ինչ պարագաներուն երբեք ձգտած է միութեան, ընդհանրական կոնսենսնք, որ ստեպ աշխարհի ամեն կողմերը, առաջին դարերն սկսյալ մինչև մեր օրերը և տակաւին հիմա, պապական եկեղեցականները հավատացյալ քրիստոնյա ժողովուրդներուն մեջ երկպառակութիւն սերմանած են, երբեմն նույնիսկ անսպասելի խռովութիւններու, պահիկ արարքներու, խժոժութեանց, կեղեքումներու պատճառ եղած են: Հայոց պատմութեան էջերը լի են Ունիթոններու, Նզվիտներու, Թըթըլյաններու և բոլոր կաթողիկոսական կուսակիցներու գործած անհրեւի և անհաշիվի ավերներով: Անոնք իրենց նպատակին հասնելու համար, այսինքն քրիստոնյա եկեղեցիները անջատելու և երկպառակելու և զանոնք Հոռմի եկեղեցւոյն իշխանութեան տակ բերելու համար հաճախ զգվելի և անմարդկային միջոցներու դիմեցին: Թըթըլյանք՝ հայ մոլեռանդ կաթողիկոսներ, Ժ. Գարուն, եվրոպական տերութեանց օժանդակութիւնը վայելելով թոնութեամբ կմտնեին հայոց տունները, կկողոպտեին և կշարժարեին քնակիչները... Հապա՝ Հասոնյան և իր արքայականները, որոնք նույնիսկ կաթողիկոսացած հայերն ալ զգվեցուցին... Հոռմեական եկեղեցին, իր պատմութեան ընթացքին ոչ մի ատեն չէ ձգտած բուն միութեան. «մի հօտ և մի հովիւ» բանով հասկցած է պապական գերիշխանութիւնը բոլոր եկեղեցիներու վրա: Սակայն երբ չէ կցած իր ալք մենատիրական և փառամոլ ձգտումները իրագործել, դիմած է բռնութեան, հարստահարութեան, ստորերկրյա ամեն տեսակ գործունեւութեան:

Հայ ժողովուրդը բնավ պիտի չմոռնա Ժ. Գարուն լեհահայոց թոնի միութիւնը Հոռմեական եկեղեցիին հետ: Կաթողիկոսներ Հայ եկեղեցին խափանելու և հայ ժողովուրդը

Հոռմի Աթոռին կապելու համար պիմեցին ամենն ըստմենցուցիչ միջոցներու, Անոնը ոստիկաններով գրավեցին հայոց հիկեղեցիները. բռնի լատին ծեսով պատարագ մատուցանել տվին, անարգեցին և հալածեցին հայ ժողովուրդը և անոր եկեղեցականները: ԺՌ. դարուն, երբ Մխիթարյան վարդապետներ կուգեին վերադառնալ իրենց մայրենի եկեղեցին, Հոռմեականներ թույլ չտրվին, որ միությունը իրականանա:



...եւ վ կարողիկե հավատք կտարածվի ի սփյուռս աշխարհի ոչ զինու գործությամբ, ոչ խնայողութեամբ հաւատարմութեամբ կամ պատիվներու, ոչ շոյելով մարդկային կիրքերը և բնազդները, այլ, բնդհակառակն, պարտադրելով գեղեցական ճշմարտություններ: Ձեր այս հայտարարության շնն հավատար ոչ միայն ոչ-կաթոլիկ քրիստոնյաներ, այլ նույնիսկ Հոռմեական եկեղեցվո հավատացյալները Հոռմի Աթոռը պարտադրելով, կրնդ գծենք այդ բառը որ ձերն է, պարտադրած է ոչ թե գերբնական ճշմարտություններ, այլ իր պետին կամքը, իր վարդապետությունները, իր հավատալիքները, և ուր որ չէ կըրցած ասոնք պարտադրել, դիմած է որեւէ միջոցի, զոր— իրենք կրնն— կարգարացն նպատակը, սպառնալիքի, հարստահարության, գնեքի, բռնության, նույնիսկ սրբապաշտության, Միթե՞ դեռ անցալ տարի չէր, որ Սպանիո մեջ Հոռմի եկեղեցին ջանաց բուռ մը բողոքական քրիստոնյաներ հպատակեցնել պապին, կամ արտաքսել երկրեն և կամ ամեն քաղաքական իրավունքները զրկել զանոնք: Բայց ի՞նչ պետք կա խոսելու այս մասին, երբ ամբողջ աշխարհ գիտն թե ի՞նչպես Հոռմեական եկեղեցին իր հավատալիքները տարածելու համար չի խնայեր ո՛չ մեկ բռնակալական միջոց: Պապերու կյանքի մասին եթե խոսեինք, պիտի տեսնեինք թե ի՞նչպես նդովթով, թունավորմամբ, սպանության և ա՛յլ միջոցներով անոնք իրարու ձեռքե խլած են Պետրոսի Աթոռը:

Իր վարդապետությունը և նպատակները տարածելու համար, Հոռմեական եկեղեցվո ղեկավար միջոցներեն մին եղած է «հարստությունաց» և «պատիվներու խոստում», Ասիկա արդեն մեր ժողովուրդի մեջ առածի կարգ անցած է. «Ուն քիտտի, դին քիտտի»: Երբ Հոռմի եկեղեցվո կողմն շոյված հարստություններն ու պատիվները կլաննան, հավատքն ալ կըքանա: Անձամբ կճանչնամ հալ գլուղացիներ, որոնք 5—8 անգամ կաթոլիկ եղած են, որովհետեւ անոնցմե 5—8 անգամ ալուր և օգնություն ստացած են

այդ պայմանով: Անոնց համար Հոռմի եկեղեցվո անդամակցելը դավելու մըն է. զորս երեւէ ամեն կրնան հաջողապես խաղալ:

Ձեր տեղեկագրին մեջ ցուցակագրած ևս Հոռմեական եկեղեցվո հետեւողներուն թիվը աշխարհի հինգ ցամաքամասերուն մեջ. գումարը ըրած է 142 միլիոն: Հետաքրքրական է դիտնալ ասոնցմե հարյուրեն քանի՞ն պարտադրելով ընդունած են հոռմեականությունը և քանի՞ն նյութական օգնությամբ և ա՛յլ խոստումներով:

Բայց միթե՞ օրթոդոքսներ և բողոքականներ բազմաթիվ չեն և աշխարհի չորս կողմերը տարածված, եթե կուգեք թիվերեն փաստեր բերել, ոչ թե պետք է բողոքատեք Հոռմեական եկեղեցվո ամբողջ հետեւողներուն թիվը Հայ եկեղեցվո հավատացյալներու թիվին հետ, այլ հայ-հոռմեականներու թիվը Հայ եկեղեցվո հավատարիմ մնացողներու բազմության հետ: Այն ատեն պիտի տեսնեք թե ի՞նչ եղած է Ունիթոններու օրերեն ի վեր Հոռմեական եկեղեցվո պրոպագանդին արդյունքը հայոց մեջ: Եւ տ խեղճ: Մնաց որ եկեղեցվո մը տիեզերականությունը կապ չունի իր անդամներու թիվին հետ, այլ անոր ղավանության Մի, Սուրբ և Կաթողիկե եկեղեցվո հետ: Համաձայն ըլլալեն: Պապական եկեղեցին բաժնված է Մի, Սուրբ և Կաթողիկե եկեղեցիներ, կազմած է ուրույն հերձված մը և ուստի տիեզերականությունը մորսընցուցած է: Հայ, ղպտի, ասորի եկեղեցիներ, որոնք թեև նվազ հետեւողներ ունին, սակայն տիեզերական են, որովհետեւ չեն հեռացած առաջին դարերու ընդհանուր Կաթողիկե եկեղեցիներն ու միշտ մաս կկազմեն անոր:



Սրբազա՛ն Եղբայր, դարձալ կգրեք թե «Հայ Ազգը ձեռն է քրիստոնեության՝ կաթողիկեության մեջ»: Կաթողիկեություն բառի մասին խոսեցանք արդեն, բայց նորեն կհիշենք հետեւելով Ձեր Հովվական Թուղթի կրկնություններուն, Կաթողիկե եկեղեցի կնշանակե Տիեզերական, Ընդհանրական եկեղեցի: Այո՛, Հայությունը ծնած է Տիեզերական, Ընդհանուր, այսինքն Կաթողիկե եկեղեցվո մեջ: Բայց Դուք Կաթողիկե ըսելով կհասկնաք «Հոռմեական եկեղեցին», որ Տիեզերական հանգամանք չունի, այլ սոսկ հատված մըն է քրիստոնեության մեջ: Հայոց Առաքելական Կաթողիկե Սուրբ եկեղեցին, քրիստոնյա Տիեզերական եկեղեցվո մեկ անբաժանելի մասն է: Հետեւաբար Ձեր հայտարարությունը բոլորովին հեռու է պատմական ճշմարտութենեւ: Բայց այդ խոսքին կհա-

շորդի սա արտառոց հայտարարութիւնը, որը կմեղքեմք. «Անոր Գրիգոր (Լուսավորիչ) պահ մը իսկ չվարանցավ զավանելէ բէ Քրիստոս, Պետրոս Առաքյալին ուղղած նշանաւոր խոսքերով «Ե ու ես վէ մ. ... արար զնա վէ մ հաստատուորեան ամենայն եկեղեցւոյ»: Այս նախատիւ տողոված ան ճիշդեց հայ նորածին եկեղեցին Պետրոսի վրա, որ է արմատ լիութեան և կեդրոն կարողիկեութեան»:

Այս խոսքերը մեր վրա այն տպավորութիւնը կը գնէ թե անոնք կուգան յուսիսէն ինկած մարդի մը: Արդ, կհարցնենք՝ ե՞րբ Ս. Գրիգոր Լուսավորիչ այդպիսի զավանութիւն մը հայտարարեց. որո՞նք ծն Ձեր աղբյուրները: Կարեք. «Ս. Գրիգոր... ճիշդեց հայ նորածին եկեղեցին Պետրոսի վրա»: Ս. Գրիգոր Լուսավորչի վերագրված և մեզի հասած որեւէ ճառ չի վարդապետեր Ձեր ըսածը: Եթէ ան Ձեզի նման խորհրդեր, անշուշտ Պետրոսը մյուս առաքյալներէն ավելի բարձր պիտի դասեր: Ընդհակառակը իր խոսքերը ցույց կուտան թե Գրիգոր Լուսավորիչ բոլոր առաքյալները համահավասար իշխանութեան տեր կնկատէ: «Ան Պետրոս բանս ի Տեառնէ առ ամենայն վերակացոյս սուրբս ստացաւ, որք զնշմարտութիւն իրաւ ունին» (ՀԱՃԱԽԱՊԱՏՈՒԹՅՈՒՆ, էջ 163): Դարձյալ Ս. Գրիգոր Լուսավորիչ ուրիշ տեղ մըն ալ կրտս. «Եւ եղեն ճիշդնէն առաքելալն և առին զնորսն քահանայութեան և մարգարէութեան և առաքելութեան երկնաւոր խորհրդոցն գիտութեան որ զայլ յԱբրահամեան զաւակէն զոր ետ ցՏէր ժառանգութեան առնդապանն Յովնաննէս և Տէր ետ առաքելոցն զվականս արայութեան և ի ձեռն ոցա (առաքելոց)»:

Ս. Գրիգոր Լուսավորչի օրով Հայոց եկեղեցին նորածին չէր. այլ 250 տարվան պատմութիւն ունէր և իրմե առաջ շատ հայրապետներ ունեցած էր: Արտադի և Սյունյաց Աթոռներուն հայ եպիսկոպոսապետներու հաջորդութիւնը ծանոթ է ամենուն: Անոնք են Զաքարիա, Զմեւնոս, Ատրեւեսէն, Մուշե, Շահեն, Շալարշ, Ղաւեղիոս և Մեհրուման ՀԱՐՏԱԶ, նաև Նիստարեոս, Կուսի, Բաբելաս, Մուշե, Մովսէս, Սահակ, Զովանդատ, Ստեփանոս և Հովնանէնս ՍՅՈՒՆՅԱՆՅԱՆ, Բայց Հայոց եկեղեցին ո՛չ թե Պետրոսի վրա հիմնված է, այլ՝ Քրիստոսի: Աշխարհի բոլոր եկեղեցիները Քրիստոսի վրա հիմնված են: «Ձի ճիշդ այլ ոք ոչ կարէ դէն լան զեղեւալն որ է Յիսուս Քրիստոս» (Ա. Կորնթ. Գ. 11): Եթե Հոռոմեական եկեղեցւոյ հիմք Պետրոս Առաքյալն է, այսինքն իր Տեղը երիցս ւրացող և անկե «սատանա» անվանվող տ-

շակերտը, այդ Ձեր գիտելիք բանն է: Բայց դիտեցեք, որ Հայոց եկեղեցին իր հիմք միայն ԿՐԻՍՏՈՍ կընդունի:

Ս. Գրիգոր Լուսավորիչ Հայ եկեղեցին չհիմնեց, այլ պայծառացուց: Հայ եկեղեցին Թադեոս և Բարթողիմեոս առաքյալներու քարոզչութեան արդյունքն է: Ս. Գրիգոր Լուսավորիչ Դ. դարու առաքյալներուն ցանած սերմը բազմապիսի աճեցուց:

Որեւէ ողջմիտ քրիստոնյա մը կրնա՝ ենթադրել թե եկեղեցին Պետրոսի վրա շինված իրնա ըլլար ե թե Ս. Գրիգոր Լուսավորիչ Հայ եկեղեցին Պետրոսի վրա հիմնեց: Ավետարաններ, Առաքելական Թուղթեր և եկեղեցւոյ Հայրեր բոլորն ալ կվկայեն, որ եկեղեցւոյ միակ հիմք և զուսը ՔՐԻՍՏՈՍ ԻՆՔՆ է: Եթե կշանաք համոզել որեւէ հայ թե իր Սուրբ եկեղեցին Պետրոսի վրա հիմնված է, ան կա՛մ հայտնեն կհրաժարի, կա՛մ քրիստոնեութենէ և կամ երկուքն միանգամայն: Ձեր հայտարարութիւնը բոլորովին հեռու է ոչ միայն Հայ եկեղեցւոյ հայրերու գրվածքներէն և ոգիներ, այլ նաև բոլոր քրիստոնյա հայրերու՝ ողջմիտ վարդապետութենէն, և նույնիսկ Հոռոմեական եկեղեցւոյ հայրերու: Ներքի չէ ամենեւին Հոռոմեական երեց գիտնական Կարդինալի մը կողմէ իրողութիւնները թուրել՝ անհիմն տեսութիւններով:



... Պետրոսը կզավանիք նաև «Աւրատ միութեան և կեդրոն Կարողիկեութեան»: Դուք չեք ճացատրեր Ձեր այս խոսքը: Պետրոս ո՛ր ատեն միութեան արմատ եղավ. ի՞նչպէս Կաթողիկեութեան կեդրոն հանդիսացավ: Կաթողիկեութեան, Տիեզերական Քրիստոնեութեան կեդրոնը ՔՐԻՍՏՈՍ ԻՆՔՆ է. առաքյալները Քրիստոսի պատգամարներն ու Անոր հովիտներն են: Եւ արմատներն են, Պետրոս միայն տասերկուքն մեկն է: Ուրեմն ի՞նչպէս կրնաք իր պաշտոնը առաքելականէն վերաբարձրեցնել և Քրիստոսի տեղը տալ Անոր:

Հոս չեք վերջացներ Ձեր խոսքը սակայն. կշարունակեք. «Հայ եկեղեցին ապրած է իր ամենափայլուն շրջանները, երբ եղած է հարբերութեան և միութեան մեջ Կարողիկե եկեղեցւոյ հետ: Մեր Ոսկեդարը (Ե. դարուն) փթեցնել և ունեցնել երբ գոյություն ունէր այդ միութիւնը, երբ հայ հայրապետները կմասնակցեին Տիեզերական ժողովներուն, երբ մեր բարգմանիչները կհաճախէին հունական կեդրոններ, միացած՝ իրենց կարգին Հռոմի Ս. Արտիմէ»:

Հայ եկեղեցին ոչ միայն «ԵՂԱՍ է հարա-

բերության մեջ Կաթողիկե նկեղեցվո հետ, այլ նաև հիմա էլ, Հայ նկեղեցին ո՛չ մեկ առան իր հարաբերության և միության կապը խզեց Տիեզերական նկեղեցվո հետ, այլ ընդհակառակը Հոռմեական նկեղեցին էր, որ Կաթողիկե նկեղեցվո հետ իր հարաբերության և միության կապը խզեց Քաղկեդոնի ժողովեն սկսյալ, Այդ խզումը կամ բաժանումը Թ. դարուն օրինականացավ և իբրև Արևմտյան Հեղեղված ճանչցվեցավ, Այս մասին խոսեցանք արդեն, չենք ուզեր մանրամասնել:

Կգրեք թե մեր թարգմանիչները կհաճախեին հունական կեդրոններ, որոնք միացած էին Հռոմի Ս. Աթոռին հետ, հմտանալու համար աստվածաբանական և ա՛յլ գիտությանց մեջ, Հաճեցե՞ք մեզի ըսել թե հունական ո՞ր կեդրոնները միացած էին Հռոմի Աթոռին, Հույն վարդապետներ մերժելով մերժածն և իրենցմե հեռացուցած հոռմեական վարդապետները, նկեղեցվո պատմությանն գիտենք թե հունական քրիստոնեական մետափոփոխումը միշտ տարբերած է լատինականին, Հունաց և լատինաց մեջ ո՛չ Ե. դարուն և ոչ ալ որե՛կ դարու մեջ միություն տեղի ունեցած է, Հույն որե՛կ կեդրոն Հռոմի հետ չէ միացած, Հռոմի համար սկիզբն միություն և փոխադարձ հասկացողությամբ հարաբերություն, գոյություն ունեցած չէ, որովհետև Հռոմի Աթոռը շարունակ ձգտած է գերազահության, մենատիրության և պարտադրելով իշխելու սկզբունքին:

Կիլիկյան շրջանին հայերը հոռմեադավաններու հետ սկսան հարաբերիլ, նույնիսկ միության մասին ձեռնարկներ ալ եղան: Սակայն երբ հայ ավագանին, հայ եկեղեցականությունը, հայ ժողովուրդը նկատեցին թե հարաբերություններն ու միության ձեռնարկները միմիայն Հռոմի փառքին և այդ Աթոռի մենատիրական ձգտումներուն համար մեղսող դրված են՝ զգուշացան: Հռոմ միություն ըսելով կհասկնա, որ ուրիշ եկեղեցիներ հրաժարին իրենց դավանական և ծիսական ինքնությունն և ենթարկվին իր վճիռներուն: Կիլիկյան շրջանի հայեր չդավաճանեցին իրենց Մայրենի նկեղեցվո հավատքին: Այժմ ալ գիտակից հայը պիտի չդավաճանի իր սուրբ հավատքին և Ազգային նկեղեցիին:



Ձեր «Հովական Թուղթին հաջորդող հատվածը, ուր կրացատրե՞ք «կաթողիկեությունն յաժանութեն եկած վնասները», ուղղակի Ձեզի համար է: Անշուշտ հայերը չեն բաժնրված Տիեզերական նկեղեցիեն. ընդհակառակը անոր մեջ են և անոր մեջ ալ կմնան:

Բայց Դո՛ւք, հոռմեականներդ, բաժնվեցա՞ր հայ ամբողջությունն, հայ հավատքեն, Հայաստանյայց Առաքելական Սուրբ նկեղեցիեն. ինչպես նաև Կաթողիկե Ընդհանուր նկեղեցիեն, ենթարկվեցա՞ր Հռոմի Պապին, անոր հրամանները կատարեցի՞ք և այսպեսով լաժանութ բերի՞ք Հայության մեջ:

Ձեր բաժանումով Հայության կրած վնասները ծանր են և անթիվ, Կրավականանանք միայն թվել այդ վնասները:

1. Հայ կաթողիկեներ հայ ամբողջությունն բաժնվելով հայ ժողովուրդին մեջ պառակտում հառաչ բերին, որուն հետևանքը եղավ ատելություն ու թշնամանք:

2. Հայ հոռմեականներ ժխտեցան իրենց հայրենի հավատքն ու ազգային նկեղեցվո ավանդություններն, ջանացին ամենն արտառոց միջոցներով, զարափոխեցին պարզեցնելով Պապական նկեղեցվո հավատքը, ինչպես ու ավանդությունները մտցնել Հայ նկեղեցվո մեջ և նույնիսկ պարտադրել հայ ժողովուրդին:

3. Իրենց մամուլով հաճախ «բազմավրեպ» գրականություն մը հառաչ բերին՝ խեղաթյուրելով մեր նախնայց ընտիր գիրքերը:

...Ոչ մեկ եկեղեցվո և ազգի համար հավատափոխությունը, անհավատարմությունը եղած են օգտակար և զնահատելի, Ընդհակառակը անոնցմե միայն վնաս և լարիք կկած են:



...Արբազա՛ն եղբայր, Ձեր «կարևոր ախտաճանաչում հատվածին մեջ կգրեք. «Նրե կրթական իրկին տեսնել «գոգրիս հատուկ սրբայն Գրիգորի պսակագարդ», հառկ է դառնալ մեղալմեայի նախնայց ամբողջական հավատքին կարողիկե միության մեջ վերցնելով բաժանմուն միջնորդ և պատուելով նախապաշարումներու վարձգույրը»: Ձեր ախտաճանաչումը քանիչի է: Դուք պետք է դառնաք կաթողիկե միության, որովհետև:

1. ԺՆ. հաջորդն եք Արբազա՛մ Արծիվյանի, որուն ձեռնադրությունը և պատրիարքությունը անվավեր էին: Այս մասին պատմական իրողությունները ներկայացուցինք արդեն:

2. Դուք զՁեզ կհպատակեցնեք Հռոմեո նկեղեցվույն, որ ինքն իսկ բաժնված է Կաթողիկե Տիեզերական նկեղեցիեն:

Այս բնելով պատռած կրլումն նախապաշարումներու վարձգույր ու Հայությանը այն ատեն ճշմարտապես կհասկնա թե ի՛նչպես «անգիտակից կզերականք», «կործանող և քանդիչ պատրանքներու պատճառով ա-

տեղություն և բաժանում հառաջ թերած անմեր ժողովուրդին մեջ:

Եթե կուղեք հայ հոռմեականներու պատմության մեջ անուն և հիշատակ թողույ, վերադարձե՛ք ճշմարիտ հավատքին, Կաթողիկոս և Առաքելական եկեղեցւո՛ղ դավանութեան. Հայ Մարիսի եկեղեցւո՛ղ ժողով, ինչպէս ըրին խորեն նարպէս, Դարբիել Ավագյան. Մաղաքիա Օրմանյան և ուրիշ նախկին կաթոլիկ եկեղեցականներ:

Երբ վերադառնաք ճշմարիտ դավանութեան, ա՛յլ չեք պատգամեր տարձ՝ դիպի նախնայաց այս սուրբ հավատք՝ զոր քաղաքեցի և քաղաքացիներն Արեւմտեւ Կաթողիկոս և Միսիրար Արքանայ: Դարձ՝ Կաթողիկոս միութեան՝ հաւումով և նպատակութեամբ Անտոս Առաքելապետի Արքոն: Եցի՛վ քեզ ըզմեղակ Հայութիւնը հետեւած ըլլաք ահոնց յուսաշարժիչ քայլերուն: Այսօր մեր ազգին վիճակը հաղափականապէս ո՛րչափ տարեւ պիտի ըլլաք ի յավագոյնս: Արքահամ և Միսիթար, ինչպէս տեսանք, ուղղափառ, կաթողիկոս հավատքը չէր որ քարոզեցին, այլ ընդհակառակը մեր ժողովուրդին սակավաթիվ անհատներ մոլորեցուցին իրենց մաքուր հավատքին և ջանացին Հոռմեական եկեղեցւո՛ղ հավատալիքները սորվեցնել ահոնց և թյուրեւ զանոնք իրենց նախնիքներու ճշմարիտ հավատքին: Անոնք ամեն ճիշդ թաւեցին, որպէսզի հայ ժողովուրդը հպատակեցնեն Պետրոս Առաքելապետի Աթոռին: Ըստ մեզի Հայութիւնը փառք տալու է Աստուծո, որ չհետեւեցաւ անոնց և անոնց հետեւողներու մոլոր վարդապետութեանց և քարոզութեանց: Փառք տալու է Աստուծո, որ չհպատակեցաւ Պետրոս առաքելի Աթոռին, Այսինքն Հոռմի պապին: Եթե այդ սխալը գործեր, մեծագոյն դժբախտութեանց մեջ պիտի իյնար:

Բայց հարց կուտանք Ձեզի թե ինչո՞ւ, մեջբերելով Ձեր խոսքը, այսօր մեր ազգին վիճակը քաղաքականապէս նաև ո՛րչափ տարեւ պիտի ըլլաք ի յավագոյնս հաւումով և նպատակութեամբ Պետրոս Առաքելապետի Աթոռին: Հոռմի Պապին հպատակելով ի՞նչ պիտի շահեր հայ ազգը, ներկայիս ի՞նչ պիտի շահի Պատմութիւնը ցույց կուտա թե հայեր եթե հաւելին և նպատակելին Պետրոս Առաքելապետի Աթոռին, իրենց համար այդ պիտի ըլլար ոչ թե ի յավագոյնս, այլ՝ ի հոռմեցոյնս: Կիսկայն հայկական թագավորութեան անկման թուն պատճառը յատկաները եղան, Հայեր հարաբերութեան մեջ մասն անոնց հետ և շարաշար խաբվեցան: Որեւէ ժամանակ երբ հայեր Հոռմի օգնութեան դիմեցին, պապեր նախ դավանափոխութեան

պայմանը դրին: Բայց միթե՞ Վատիկան որեւէ ժամանակ՝ նույնիսկ կաթողիկոսացած հայերուն քաղաքականապէս ուզե՛ց կամ կրցա՞ւ օգնել: Նույնիսկ ան հիմա նվորպայի մեջ իր իսկ դավանութիւնը ընդունող ժողովուրդներուն կրնա՞ քաղաքականապէս օգնել: Դարեւ փորձը ցույց կուտա թե փարախ փոխելով ժողովուրդներ կառուին, Արեւմուտքի այն խոստումները, որոնց երբեմն հավատաց մեր ժողովուրդը, «քաղաքականապէս» մեծ վնաս բերին իրեն: Այս է պատմական իրողութիւնը: Ինչ Ձեր Սրբազնութիւնը հակառակը կպատգամ իր Հովվական Թուղթով:



... Սրբապա՛ն Եղբայր, Դուք «Արեւմտեւ Կաթողիկոսի և Միսիրար Արքանո՛ր երջանիկ մահովան երկրորդ հարչութեան կիւն առիվ», պ ա ռ տ ֆ կ զ զ ա ֆ աւոնց պատգամարեւ ըլլալու և... ահոնց կողմն հրավեր կարգալու բովանդակ Հայութեան՝ դառնալու նախնայաց ամբողջական լույս հավատքին, կաթողիկոսութեան մեջ:

Դուք, որ անվավեր Աթոռի մը տներն էք, անվավեր պատրիարքի մը հաջորդը և Հոռմա Պապին իշխանութեան ենթակա, ի՞նչ հիման վրա հրավեր կկարդաք: Դուք իրեն նրեց Կարգինայ, Հոռմեական եկեղեցւո՛ղ սիրո և խաղաղութեան պատգամաբեր պետք է որ ըլլաք և ոչ թե հրավեր կարդաք Հայութեան՝ ձգելու իր լույս հավատքը և անթարկելի Պապին ու անոր եկեղեցւո՛ղ վարդապետութեան: Նախնայաց ամբողջական լույս հավատքին դառնալու հրավերը պետք է Հայոց եկեղեցիներն Ձեզի դա. Ինչպէ՞ս կրնաք սիրու և միութեան հրավեր ուղղել, երբ Ձեր եկեղեցին և այն եկեղեցին (Հոռմեականը), որուն հպատակեցուցած էք Դուք զՁեզ, հաճախ քաժանութի, կոիվի և առեկութեան պատճառ հանդիսացած են աւանդուրեք և քոյոր ժամանակներու մեջ:

Միրանավո՛ր Եղբայր, Դուք սրովանդակ Հայութեան հրավեր կուղղեք, կաթողիկոս՝ այսինքն Ձեր ընթերցումով Հոռմեական եկեղեցիին դառնալու: Արդ, կհարցնենք Ձեզի, ինչո՞ւ թողունք մեր Սուրբ եկեղեցին. Ձեր սակավաթիվ հոտը ստվարացնելու թե ի փառս Ձեր ժիրանիին:

Ինչո՞ւ դառնաք Ձեզի. միթե՞ Հայաստանայց եկեղեցին կարող չէ Հայութիւնը առաջնորդել դեպի ճշմարտութիւն և փրկութիւն: Ինչո՞ւ այդ հրավերը չեք ուղղեր Ձեզ յոչապատող բյուրավոր ոչ-քրիստոնյաներուն, մանավանդ որ Եսայի մարգարէին խոսքերը՝ «Գոչեա՛ր զօրութեամբ և մի խնայ-

եաւ, բարձրացո իբրեւ զփառոյ զբարբառ
fռ...», կգրեք «մեզի ալ ուղղված կգգանք,
մեր պաշտօնին քննումով»: Բայց որչափ
զորութիւն մը ալ գոչեք, պիտի կրնա՞ք գեթ
մեկ հատ ոչ-քրիստոնյա մարդ ճշմարիտ
լուսիսին բերել:

...Այդպիսի հրավերներ, Ձե՛րդ վսեմու-
թյուն, Հռոմեական Եկեղեցին երկար դարեր
կրկնած է, մասնավանդ այն ժամանակներին,
երբ Արեւելք և Արեւմուտք բաժնվեցան իրարմե
ու ինք տեսավ, որ առանձին մնացած է,
բաժնված՝ ճշմարիտ, Ընդհանրական և Կա-
թոլիկ Եկեղեցիներ: Հայոց Եկեղեցին իր
ուղղութիւնը ամենեւին փոխած չէ. ան չէ
հարած ոչ Արեւելյան և ոչ Արեւմտյան եկե-
ղեցիներուն, այլ պահած է նախկին եկեղեց-
վո դավանութիւնը և ապագային՝ եթե ըն-
դուր եկեղեցիներու միութեան ձեռնարկ կա-
տարվի, Հայաստանյայց, Ղպտի կամ Աստ-
րական եկեղեցիներու դավանանքին վրա
պետք է հիմնվի, որովհետեւ այս եկեղեցի-
ները չբաժնվեցան Տիեզերական Կաթոլիկ
Եկեղեցիին, այլ ընդհակառակը պահեցին
այդ Եկեղեցվո Հավատամքը, Հավատամք
մը, որ ընդունված է հավասարապէս պա-
պական, հուլն և բոլոր եկեղեցիներին:

Սրբազա՛ն Նղբայր, եթե Դուք իրապէս
չատագով եք միութեան և համերաշխութեան,
պետք է հորդորեք Հայաստանյայց Եկեղե-
ցիին բաժնվողները, որոնց պատճառով այն-
քան վեճ, երկպառակութիւն և կոիվներ ծա-
ղած են հայ ժողովուրդին մեջ, որ դառնան
իրենց Մայր Եկեղեցին, Քրիստոնեական
ճշմարիտ հավատքին:



...Սրբազա՛ն Նղբայր, մենք ամենեւին միտք
չունենք պատասխանել Ձեր «շովական
Թուղթին», որովհետեւ լուրջութեամբ արժանի
պատասխանն է, սակայն «ծաւառեալ կայ
խօսելու և ժամանակ կայ լռելու», ուստի
խզեցինք մեր լուրջութեամբ՝ Հայաստանյայց
Եկեղեցվո դեմ եղած սխալ վերագրումները
և պատմական անճիշտ խնդիրները հերքելու
համար և գործված անիրավ թշնամանքներու
փոխարեն եղբայրական ճշմարիտ սեր ցույց
տալու: Ձեր հարուցած խնդիրները բազմիցս
հերքված են Հայաստանյայց Եկեղեցվո
վարդապետներին և հավատացյալներին:
Մենք հավատացած ենք, որ եթե անոնց ու-
ղիղ ճամբուն հետևողները խնդիր պիտի
հարուցանեն, պեսպես միջոցներով պիտի
ջանան Հայոց Սուրբ Եկեղեցին կապել Պա-

պի գերիշխանութեան, պիտի աղարտեն մեր
մատենագիրները, ձեռագիրները, երկպառա-
կութիւն պիտի հառաքեցնեն հայ հավա-
տացյալներու մեջ, ինքնահնար շաղակրա-
տութիւն մը և Ավետարանի ու մատենագիրնե-
րու խուսքերուն ըստ քմաց մեկնարանու-
թյամբ: Ուրիշ կերպ չեք կրնար գործել, Որով-
հետեւ Դուք, որ բաժնված եք Հայոց Սուրբ և
Առաքելական Կաթոլիկ Եկեղեցիին՝ Արբա-
համ Արծիւլյանի և Մխիթար Արքահոր, ինչ-
պէս նաև անոնց հետևողներուն նման, փու-
թացեք եք դեռ Ձեր «ուղիղակեւ խօնաբե-
րապատկութիւնը և անկախութիւնը»-ն ու
պիտի հավաստիքի յօդին Սրբոյրան զանիւն
առնա, այսինքն Հռոմ Պապին: Եթե այսօր
կապատասխանենք Ձեր «շովական Թուղթին»,
պատճառը այն չէ, որ հոն ներկայացված
հորդորներուն և հրավերներուն մեջ պատվա-
կան ժողովուրդը կարեւորութիւն կուտա կամ
կհետեւի, այլ կուզենք այդ Թուղթին դիմաց
ճշմարտութիւնը դնել: Ներողամիտ կզտնվիք,
Սրբազա՛ն Նղբայր, ճշմարտութիւնը հայտա-
բարած ըլլալու համար, որովհետեւ «Թե-
պետ կսիրենք Պապին», բայց ալեւի կսի-
րենք ճշմարտութիւնը:

Հովական Ձեր Թուղթը, Սրբազա՛ն Նղ-
բայր, Հայոց Եկեղեցվո դեմ գրված է մաս-
նավոր դիմումով մը, ըստ սովորութեան
լատին Եկեղեցվո պապերուն, Սիրո և միու-
թեան հրավեր մը ըլլալէ ավելի ատելու-
թիւն, երկպառակութիւն սերմանելու շրջա-
րանական մըն է: Կցովինք հիշելու, որ Ձեր
Կարդինայի աստիճան ստացումն ետք Ձեր
Լեվետիքը իր Մատյան գունդը հանած է
Հայոց Եկեղեցվո և անոր բարեպաշտ հա-
վատացյալներուն դեմ: Հայոց Եկեղեցին
դարերու մշուշին և անստուգական մեջ
դիմակալեր է բոլորավոր Մատյան գունդե-
րու— կրոնական և քաղաքական— չէ հազ-
թահարվեր և չէ դավաճաներ իր աստվա-
ծային սկզբունքներուն, սրբազան հավատ-
քին, յուրահատուկ դավանութեան և ծեսին,
այլ անհողողող շարունակներ է իր գոյու-
թիւնը, որովհետեւ Աստուծո զորութիւնը
կրնակի հայուն արշուճով ներկված այդ սրբ-
բազնասուրբ հաստատութեան մեջ, Ամենա-
խնամ Հայրը, որ Խորեխոսութեամբ իր թերկ-
նային զօրացնա՝ «միշտ անշարժ» պահած է
Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղե-
ցին, այսուհետեւ ևս և հավիտյանս պիտի
պահեք զԱյն անշարժ և Խաւտատ՝ իր աստ-
վածային վեմին՝ Քրիստոսի վրա:

